



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

ՈՐՈՇՈՒՄ

2018 թվականի №
քաղ. Երևան

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՀԵՏԱՄԱՍՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ԱՅԳՈՒ ՍՊԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻՆ ՄԻԱՑՆԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Հաշվի առնելով «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության 2018 թվականի մայիսի 29-ի №04-ԴԳ-02/1776 գրությունը՝ կից փաստաթղթերով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2006 թվականի դեկտեմբերի 27-ի №358Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝ էլեկտրական էներգիայի մատակարարման և օգտագործման կանոնների (այսուհետ՝ Կանոններ) 13.8-րդ կետը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Մահմանել, որ՝
 - 1) Երևան քաղաքի Ալեքսանդր Մյասնիկյանի հուշարձանի հետնամասում գտնվող այգու սպառման համակարգը (այսուհետ՝ սպառման համակարգ) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության էլեկտրական ցանցին (այսուհետ՝ էլեկտրական ցանց) միացվում է եռակողմ կնքված էլեկտրական ցանցին միացման և էլեկտրական էներգիայի մատակարարման պայմանագրով (այսուհետ՝ Պայմանագիր)՝ «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության (մատակարար), Երևանի քաղաքապետարանի (սպառող) և «ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀՄԴ-ի (վճարող) միջև փոխհամաձայնեցված կարգով.
 - 2) էլեկտրական ցանցին միացման վճարը հաշվարկվում է համաձայն Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի 21-ի «Նոր սպառողի կամ սպառողի վերակառուցվող սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման վճարները հաստատելու մասին» №659Ն որոշման.

- 3) սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման նպատակով Երևանի քաղաքապետարանի կողմից դիմումն ստանալուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում մատակարարը վերջինիս ներկայացնում է Պայմանագիր կնքելու առաջարկություն՝ նրան տրամադրելով իր կողմից ստորագրված Պայմանագիրը՝ 3 օրինակից:
2. «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետի 3-րդ ենթակետում նշված Պայմանագրով նախատեսված կանխավճարի վճարման օրվանից մինչև փաստացի էլեկտրամատակարարմամբ ապահովելու առավելագույն ժամկետը չի կարող գերազանցել՝
- 1) էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, էլեկտրական ցանցին 0,22 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 50 օրը.
 - 2) էլեկտրական ցանցին 0.4 կՎ լարմամբ պարզեցված միացման դեպքում՝ 15 աշխատանքային օրը, էլեկտրական ցանցին 0.4 կՎ լարմամբ միացման մնացած բոլոր դեպքերում՝ 60 օրը.
 - 3) էլեկտրական ցանցին 6(10) կՎ լարմամբ միացման դեպքում՝ 90 օրը.
 - 4) էլեկտրական ցանցին 35 կՎ, 110 կՎ լարմամբ կամ կառուցվող բազմաբնակարան շենքի, կամ կառուցապատվող թաղամասի միացման դեպքում՝ 300 օրը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերությանը, Երևանի քաղաքապետարանին և «ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ ՀՄԴ-ին օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝**

Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ